# ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծ

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**Օ Ր Ե Ն Ք Ը**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հուլիսի 1-ի քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ` Օրենսգիրք) 34-րդ հոդվածի 1-ին մասից հանել «և դատախազը» բառերը:

**Հոդված 2.** Օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետից հանել «նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վրա կալանք դնելու, հեռախոսային խոսակցությունները լսելու, բնակարանի խուզարկության» բառերը:

**Հոդված 3.** Օրենսգրքի 282-րդ հոդվածում`

1) 1-ին մասից հանել «կամ դատախազի» բառերը:

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մաս.

«3. Հետաքննության մարմինը, քննիչը միջնորդություն հարուցելու որոշման պատճենն ուղարկում է հսկող դատախազին: Միջնորդություն հարուցելու որոշումը (պատճենը) դատարան և հսկող դատախազին կարող է ուղարկել պաշտոնական էլեկտրոնային փոստով:»:

**Հոդված 4.** Օրենսգրքի 283-րդ հոդվածում՝

- 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Միջնորդությունները քննում է դատավորը միանձնյա, դռնփակ դատական նիստում: Դատավարական հարկադրանք կիրառելու մասին միջնորդությունը քննարկվում է այն ներկայացրած պաշտոնատար անձի կամ նրա ներկայացուցչի մասնակցությամբ: Դատարանի պահանջով կամ միջնորդություն ներկայացրած պաշտոնատար անձի նախաձեռնությամբ քննչական գործողություններ կատարելու միջնորդության քննարկմանը մասնակցում է միջնորդությամբ դիմած պաշտոնատար անձը կամ նրա ներկայացուցիչը:».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ մաս.

«6. Որոշումը կայացնելու օրը դատարանն այն ուղարկում է միջնորդություն հարուցած անձին, իսկ որոշման պատճենը՝ հսկող դատախազին:»:

**Հոդված 5.** Օրենսգրքի 284-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Միջնորդությունը քննարկում է դատավորը միանձնյա, դռնփակ դատական նիստում: Դատարանի պահանջով կամ միջնորդություն ներկայացրած պաշտոնատար անձի նախաձեռնությամբ միջնորդության քննարկմանը մասնակցում է միջնորդությամբ դիմած պաշտոնատար անձը կամ նրա ներկայացուցիչը: Միջնորդությունը պետք է քննարկվի և որոշում կայացվի այն ստացվելուց հետո՝ 12 ժամվա ընթացքում:»:

**Հոդված 6.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՆԱԽԱԳԱՀ** **Ա. ՍԱՐԳՍՅԱՆ**